

**Վասպուրականի մանրանկարչությունը
(ոճի առանձնահատկությունները)**

Հայկական միջնադարյան կերպարվեստի ինքնատիպ ուղղություն է ներկայացնում Վասպուրականի մանրանկարչությունը, որի գործունեության հիմնական շրջանը 13-18-րդ դարերն են: Վասպուրականի մանրանկարչությունը ձեռագրի թերթի գեղարվեստական ձևավորման, պատկերագրական տարբերակների և ոճական բազմազանության առումով յուրահատուկ տեղ ունի հայկական միջնադարյան կերպարվեստի ասպարեզում:

Վասպուրականի նկարագարող ձեռագրերում, հնավանդ կանոնի համաձայն, մանրանկարները տեղադրվում են մատյանի սկզբում: Տերունական մանրանկարներին հաջորդում են խորանները: Հիմնական նյութը, որի վրա նկարիչը նկարում է՝ թուղթն է (մագաղաթյա մատյաններ գրեթե չեն հանդիպում):

Վասպուրականի մանրանկարներում տիրապետողը պատկերի ստեղծական երկու հիմնական սկզբունքներն են՝ **սիմվոլիկ-նշանակային** և **պատմողական**: Այսինքն մի դեպքում պատկերագրական տեսարանը ներկայացվում է խիստ համառոտ, գրեթե սիմվոլի (խոհրդանշանի) վերածված տարբերակով, մյուսում՝ խիստ պատմողական, ավելի հանգամանալից կերպով: Հանդիպում են ձեռագրեր, որտեղ այս սկզբունքները զուգադրվում են:



Բահակի գոհաբերությունը (Մատեն., ձեռ. 3717), Ավետարան, 1394 թ., նկարիչ՝ Հովհաննես Խիզանցի:


Յուրօրինակ է ձեռագրի թերթի՝ նկարադաշտի օգտագործումը վասպուրականցի մանրանկարչի կողմից: Նա կարող է ստեղծագործական տարածքը լրացնել ընդամենը մի քանի ֆիգուրով կամ զարդով, բայց դրանց ճիշտ տեղաբաշխման շնորհիվ ստանալ կուռ ու ամբողջական հորինվածք: Նա կարող է օգտագործել թերթի ողջ մակերեսը վերից վար (չթողնելով որևէ լուսանցք) և ստանալ կայուն հորինվածք, կարող է պատկերը տեղադրել թերթի կենտրոնական հատվածում, շրջանակել այն (բարակ գծով կամ երիզով) ու ստանալ լուսանցքներ, որոնք նպաստում են պատկերը ավելի ամբողջական ընկալելուն, քանի որ դառնում են պատկերի երկրորդ ու հիմնական շրջանակը:

Վասպուրականյան մանրանկարների կերպարները ներկայացվում են հարթ, գրեթե ձուլված թերթի մակերեսին, գծապատկերային՝ երբ հստակ ուրվագծվում է կերպարը թերթից տարանջատող գիծը, ծավալային՝ երբ կերպարի հագուստի ծալքերը ձևավորող գիծը ընդգծում է մարդու մարմնի կառույցը: Նմանօրինակ դեր ունի նաև կերպարի գունավորումը, որի հագեցվածությունն ու զանազան երանգների համադրությունը նույնպես կարող է ընգծել մարմնի ծավալը:



Հոգեգալուստ (Մատեն., ձեռ. 5543), Ավետարան, 1436 թ., Աղթամար, նկարիչ՝ Դանիել:

Վասպուրականցի մանրանկարիչների համար շատ կարևոր է գրավոր խոսքի կիրառությունը: Դարեր շարունակ, նրանք կիրառել են գրքարվեստի այդ սկզբունքը: Մանրանկարի մեջ արվող հակիրճ գրությունները նրա անքակտելի մասն են և հիմնականում գտնվում են պատկերի ստորին կամ վերին հատվածում, այս կամ այն կերպարին մոտ: Այդ բացատրագրերը անմիջականորեն կապված են պատկերագրական տեսարանի, և այդ տեսարանում առկա կերպարների մեկնաբանության հետ: Դրանց միջոցով ձեռագրի ընթերցողը երբեմն ստանում է նաև հավելյալ՝ աստվածաբանական (կամ ծիսական) գիտելիք, կապված պատկերագրական տեսարանի կամ կերպարի հետ: Լինում են դեպքեր, երբ այդ գրությունների փոխարեն, մանրանկարիչը կամ գրիչը թողնում է փոքր հիշատակարան կամ մեղքերի թողություն հայցող գրություն: Կերպարների գլխավերևում կամ գլխի մոտ գտնվող գրությունները, որոնք հիմնականում նրանց անուններն են, կրում են նաև աստվածաբանական-ծիսական իմաստ՝ ինչպես արվում է նաև սրբապատկերներում:



Հոգեգալուստ (Մատեն., ձեռ. 5543), Ավետարան, 1436 թ., Աղթամար, նկարիչ՝ Դանիել:

Վասպուրականի մանրանկարիչներն ունեն նախընտրելի պատկերագրական տարբերակներ, որոնք կիրառվել են դարեր շարունակ: Դրանք լինում են համառոտ կամ ընդարձակ: Համառոտ պատկերագրական տարբերակները հիմնականում ներկայացնում են տերունական մանրանկարների շարքը: Երբեմն այդ շարքը սկսվում է Հին կտակարանյան որևէ պատկերով: Ընդարձակ տարբերակը բացի Տերունական շարքից իր մեջ ներառում է Հիսուսի հրաշագործությունները, դրվագներ Նրա չարչարանքներից, առաքյալների հետ կապված դրվագներ և այլն:

Վասպուրականցի մանրանկարիչները ունեն նաև նախասիրած պատկերագրագրական թեմաներ, որոնք հաճախ են հանդիպում նրանց նրկարագարդած ձեռագրերում: Օրինակ. «Չորեքկերայյան աթոռ», «Հիսուսին գերեզման դնելը», «Երկրորդ գալուստ», «Վերջին դատաստան» և այլն: Հին Կտակարանյան ամենց սիրելի թեմաներից է «Իսահակի զոհաբերությունը» տեսարանը (որի պատկերաքանդակն առկա է Աղթամարում):

Վասպուրական մանրանկարչության մեջ հաճախ են հանդիպում մանրանկարիչների ինքնանկարներ և պատվիրատուների պատկերներ: Նրանք երբեմն պատկերվում են Երկրորդ Գալստյան տեսարանի խաչի ստորին մասում, ծնրադիր:

Վասպուրականի մանրանկարներում ընդգծված ոճական տարբերություններ կան **Վանի** և նրա տարածքի (կերպարվեստի առումով) գտնվող գրչության կենտրոնների և **Խիզանի** մանրանկարչության միջև: Այդ տարբերությունն ավելի ակնառու դարձան 15-րդ դարում, երբ Մինաս ծաղկողը Վասպուրական ներմուծեց Կիլիկյան մանրանկարչությանը հատուկ պատկերագրական տարբերակները: Այդ նորամուծությունը տարածում գտավ հատկապես Վանի, Աղթամարի և նրա շրջակայքում գտնվող գրչակենտրոններում: Բնականաբար գեղարվեստական մտածողության փոփոխությունը չէր կարող չանդրադառնալ ոճական նրբությունների վրա:

Խիզանի մանրանկարչական ոճին հատուկ են. կերպարների գլուխների կլորիկությունը, մոտ տեղադրված աչքերը, զարմացած, դեպի երկինք ուղղված հայացքները, հոնքերի կամարաձևությունը, կարմրավուն այտերը, մարանկարի ընդհանուր անգույն խորքը և այլն:

Վասպուրականի և հարակից գավառների առավել հայտնի նկարիչներից են Միմեոն Արճիշեցին, Ռստակեսը, Կարապետ Վանեցի, Աստվածատուր Արճիշեցին, Զաքարիա Աղթամարցին, Ծերունը, Գրիգոր Խլաթեցին, Աստվածատուր Խլաթեցին, Կիրակոս Աղբակեցին, Հովհաննես Խիզանցին, Թումա Մինասենցը, Մինասը, Ներսեսը, Զաքարիա Ավանցին, Մարտիրոս Խիզանցին, Մեսրոպ Խիզանցին և շատ ուրիշներ:

Ավետ Ավետիսյան

Մատենադարան

www.armenianart.org կայքի համար